



Հաստատված է

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի նիստի որոշմամբ առ 11.09.2009 թ.

Խորհրդի Նախագահ
Գագիկ Զաքարյան

*Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների /նաև՝ բեռնափոխադրող/
օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության
պայմաններ*

ԵՐԵՎԱՆ 2009

Բովանդակություն

Բաժին 1. Սահմանումներ

Բաժին 2. Ընդհանուր դրույթներ

Բաժին 3. Ապահովագրության օբյեկտների սահմանումը

Բաժին 4. Ապահովագրական պատահարների ցուցակի սահմանումը

Բաժին 5. Ապահովագրական գումարներ և ապահովագրական սակագներ

Բաժին 6. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը

Բաժին 7. Ապահովագրավճարի վճարման կարգը

Բաժին 8. Ապահովագրության ժամկետների և ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետների սահմանումը

Բաժին 9. Ապահովագրության պայմանագրի դադարումը

Բաժին 10. Պարտադիր ապահովագրություն

Բաժին 11. Կողմերի փոխհարաբերությունները ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում

Բաժին 12. Վնասի և ապահովագրական հատուցման չափի որոշումը

Բաժին 13. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

Բաժին 14. Սուբրոգացիա

Բաժին 15. Ռիսկի փոփոխություններ

Բաժին 16. Վեճերի լուծման կարգը

1. Սահմանումներ

1.1. Ապահովագրող՝ «ՅՈՒՆԻՌԵՍՈՆ» ԱՓԲԸ, իրավաբանական անձ է, որը ստեղծվել է ապահովագրական գործունեություն իրականացնելու համար և ստացել է լիցենզիա ՀՀ տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնելու համար ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

1.2. Ապահովագրողի ներկայացուցիչ՝ ապահովագրողի առանձնացված ստորաբաժանումն է (մասնաձյուղ) ՀՀ սուբյեկտում, որը ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների սահմաններում իրականացնում է տուժողների կողմից ներկայացված ապահովագրական հատուցում ստանալու պահանջների դիտարկում և դրանց վճարում կամ այլ ներկայացուցիչ, որը իրականացնում է նշված լիազորությունները՝ հիմք ընդունելով Ապահովագրողի հետ կնքած պայմանագիրը:

1.3. Ապահովադիր՝ իրավաբանական անձ կամ գործունակ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է ՏՄ սեփականատեր և կնքել է Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր:

1.4. Տրանսպորտային միջոցի սեփականատեր՝ տրանսպորտային միջոցի սեփականատերն է, ինչպես նաև անձ է, որը տնօրինում է տրանսպորտային միջոցը տնտեսվարման կամ օպերատիվ ղեկավարման իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, ՏՄ վարելու համար լիազորված անձ, համապատասխան մարմնի կարգադրությամբ տվյալ անձին ՏՄ-ի փոխանցում և այլն):

ՏՄ սեփականատեր չի համարվում և Ապահովադիր չի կարող լինել այն անձը, որը ՏՄ-ն վարում է իր աշխատանքի կամ ծառայության բերումով, այդ թվում սեփականատիրոջ հետ աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական պայմանագիր կնքելու դեպքում:

1.5. Տուժող՝ անձ է, ներառյալ ՏՄ ուղևորը, որի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցվել է վնաս՝ վարորդի կողմից ՏՄ օգտագործելու հետևանքով: Սույն Պայմանների դրույթները, որոնք վերաբերում են տուժողներին, կիրառվում են նաև այն անձանց նկատմամբ, որոնք վնաս են կրել կերակրողի մահվան դեպքում՝ տուժողների ժառանգների, և այլ անձանց, ովքեր ՀՀ գործող օրենսդրությամբ իրավունք ունեն ստանալ նշված վնասի փոխհատուցումը:

1.6. Վարորդ՝ անձ է, որը վարում է ՏՄ: ՏՄ վարելու ուսուցման ընթացքում վարորդ է համարվում ուսուցանող անձը:

1.7. Վարելու իրավունք ունեցող անձինք՝ ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրված ՏՄ վարելու թույլտվություն ունեցող անձ սահմանված իրավաբանական անձինք կամ քաղաքացիներ, որոնք վարում են ՏՄ սեփականության, տնօրինման, օգտագործման իրավունքով, որոնց պատասխանատվության ռիսկը ապահովագրված է կամավոր ապահովագրության պայմանագրով: Այդ անձինք այդ թվում իրականացնում են նաև ՏՄ վարում ՏՄ սեփականատիրոջ կամ այլ տնօրինող անձի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա, և որոնց պատասխանատվության ռիսկը ապահովագրվել է կամավոր ապահովագրության պայմանագրով:

1.8. Ապահովագրավճար՝ ապահովագրության դիմաց տրվող վճարն է, որը Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:

1.9. Ֆրանշիզա՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված վնասի այն մասն է, որը ենթակա չէ Ապահովագրողի կողմից հատուցման: Ֆրանշիզան կարող է սահմանվել ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ ապահովագրական գումարի կամ ապահովագրական հատուցման նկատմամբ հաշվարկվող տոկոսի միջոցով: Ֆրանշիզան համարվում է ոչ պայմանական և վերաբերում է յուրաքանչյուր դեպքին (նվազեցվում է ապահովագրական հատուցումից յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում):

1.10. Տրանսպորտային միջոց (հետագայում ՏՄ)՝ նրա մեջ եղած մարդկանց, բեռների կամ սարքավորումների տեղափոխման համար նախատեսված սարքավորում: ՏՄ է հանդիսանում նաև կցորդը(կիսակցորդ և կցասայրը), որը զինված չէ շարժիչով և նախատեսված է մեխանիկական ՏՄ կազմում շարժման համար: ՏՄ թույլատրվում է ճանապարհային երթևեկության մասնակցության ՀՀ օրենսդրության համապատասխան

1.11. ՏՄ օգտագործում՝ ՏՄ շահագործում, որը կապված է ճանապարհների սահմաններում (ճանապարհային երթևեկության) դրա մասնակցության հետ, բացի երկաթգծերից, ինչպես նաև դրան

հարող և SU շարժման համար նախատեսված տարածքներում (բակեր, բնակելի զանգվածներ, SU կայանատեղիներ, լիցքավորման կայաններ, և այլ տարածքներ): SU վրա տեղադրված սարքավորումների շահագործումը և ճանապարհային երթևեկության մասնակցությանը անմիջական կապ չունեցող սարքավորումները չեն հանդիսանում SU օգտագործում:

1.12. Ապահովագրված տրանսպորտային միջոց (հետագայում ապահովագրված SU)՝ ապահովագրության պայմանագրով սահմանված (նույնականացված) SU:

1.13. Ճանապարհատրանսպորտային պատահար (հետագայում ՃՏՊ) է համարվում պատահարը, որը տեղի է ունենում SU-ի շարժման ընթացքում և նրա մասնակցությամբ, որի հետևանքով մահացել են կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են SU-ներ, շինություններ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս: Սույն Պայմանների դրույթները, որոնք սահմանում են ՃՏՊ մասնակիցների վարքը, կիրառվում են նաև ճանապարհին հարող տարածքներում SU օգտագործման հետևանքով տուժածներին վնաս հասցնելու դեպքում:

1.14. Ապահովագրական ռիսկ՝ ենթադրվող դեպքն է, որի տեղի ունենալու դեպքում իրականացվում է ապահովագրությունը:

1.15. Ապահովագրական պատահար՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված դեպք, որի տեղի ունենալու հետևանքով առաջանում է ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:

Ապահովագրության Պայմանների 4.1 կետում սահմանված տեղի ունեցած մի պատահարը համարվում է միևնույն ապահովագրական պատահարը՝ անկախ տուժածների թվից, վնասի հատուցման պահանջների (փոխհատուցումների) քանակից և դատարանի որոշումից:

1.16. Ապահովագրության Պայմաններ (ընդհանուր պայմաններ)՝ սույն փաստաթղթում շարադրված ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության պայմանագիրը(ապահովագրական պոլիսը): Ապահովագրության Պայմանները (ընդհանուր պայմաններ) հանդիսանում են ապահովագրության պայմանագրի(ապահովագրական պոլիսի) անբաժանելի մասը:

Սույն Պայմաններում պարունակվող կանոնները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնությամբ (Ապահովագրողի ներկայացուցչի կողմից, որը գրավոր ձևով լիազորված է նշված փոփոխությունները, լրացումները և բացառությունները մտցնելու) ապահովագրության պայմանագրի կնքման պահին կամ պայմանագրի գործողության ժամկետում մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալը, պայմանով, որ այդ փոփոխությունները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը:

1.17. Ապահովագրության պայմանագիր(ապահովագրական պոլիս)՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով նախատեսված վճարի դիմաց ապահովագրության պայմագրով նախատեսված պատահարի տեղի ունենալու դեպքում հատուցել այլ անձին՝ Տուժածին, որի օգտին կնքվել է քաղաքացիական պատասխանատվության պայմանագիրը, SU օգտագործելիս տեղի ունեցած պատահարի հետևանքով նրա կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասը, ինչպես նաև հատուցել Ապահովադրին կամ ապահովագրության պայմանագրով(պոլիսով) նախատեսված SU վարելու իրավունք ունեցող անձանց հատուցել այլ ապահովագրված ռիսկերի գծով կրած հիմնավորված ծախսերը:

Ապահովագրության պայմանագրի (ապահովագրական պոլիսի) դրույթները սույն Պայմանների (ընդհանուր պայմաններ) դրույթների նկատմամբ ունեն առավելություն:

1.18. SU ապահովագրության դիմում՝ Ապահովագրողի կողմից Ապահովադրից պահանջվող գրավոր տեղեկություններ, տվյալներ: Դիմումը կարող է լրացվել Ապահովագրողի ներկայացուցչի կողմից՝ Ապահովադրի թելադրանքով: Տրված տեղեկությունների ճշմարտացիությունը Ապահովադրիը հաստատում է իր ստորագրությամբ:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն ապահովագրության Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրով (ապահովագրական պոլիսով) ապահովագրված է համարվում Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրում (ապահովագրական պոլիսում) Ապահովադրի կարգադրությամբ և տեղեկությամբ, օրինական հիմքերով ապահովագրված SU-ն վարելու և օգտագործելու համար լիազորված անձ նշված անձանց պատասխանատվության ռիսկը:

2.2. Սույն պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի գործողությունը տարածվում է ՀՀ տարածքում, եթե ապահովագրության պայմանագրով (ապահովագրական պոլիսով) այլ բան նախատեսված չէ, բացառությամբ զինված կոնֆլիկտների, պատերազմների, արտակարգ իրավիճակների տարածքների:

3. Ապահովագրության օբյեկտների նկարագրությունը

3.1. Սույն պայմանների համաձայն՝ ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի և նրա թույլտվությամբ վարելու իրավունք ունեցող անձանց գույքային շահերը՝ կապված

3.1.1. ՀՀ օրենսդրության համապատասխան ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով ապահովագրության պայմանագրում (ապահովագրական պոլիսում) նշված ապահովագրված ՏՄ-ի՝ երրորդ անձանց (տուժածների) կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի հատուցման պատասխանատվության հետ,

3.1.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության նվազեցման կամ դրա կանխարգելման միջոցառումների չնախատեսված ծախսերի հետ, ինչպես նաև վնասի նվազեցման և ՏՄ մասնակցությամբ տեղի ունեցած պատահարների քաղաքացիական պատասխանատվության հայտերի կարգավորման հետ:

4. Ապահովագրական պատահարների ցուցակի սահմանումը

4.1. «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով ապահովագրական պատահար է համարվում Ապահովադրի կամ վարելու թույլտվություն ունեցող այլ անձի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը, որի պատասխանատվության ռիսկը ապահովագրված է քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրով ապահովագրված ՏՄ օգտագործման արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասների հետևանքով առաջացած պարտավորությունների առաջացման նկատմամբ՝ հետևյալ պատահարների դեպքում՝

-ապահովագրության պայմանագրում (պոլիսում) նշված և վարելու թույլտվություն ունեցող անձի վարելու ընթացքում ապահովագրված ՏՄ մասնակցությամբ ՀՏՊ,

-ապահովագրված ՏՄ-ի մասնակցությամբ ՀՏՊ, որը տեղի է ունեցել սրահում վարորդի բացակայության պայմաններում դրա ինքնաբերաբար շարժման հետևանքով,

- ՀՏՊ ընթացքում շարժվող ապահովագրված ՏՄ-ից անջատված տարրերի պատճառած վնաս (ՏՄ մասեր կամ փոխադրվող առարկաներ):

4.2. Սույն ապահովագրության պայմանների համաձայն «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով ապահովագրական պատահար չի համարվում այն պատահարը (ՀՏՊ), որի արդյունքում վնաս է հասցվել երրորդ անձանց (տուժածների) կյանքին, առողջությանը կամ գույքին՝

4.2.1. ապահովագրության պայմանագրում նշված ՏՄ-ից տարբեր ՏՄ-ի օգտագործման հետևանքով,

4.2.2. բարոյական վնասի պատճառման հետևանքով,

4.2.3. կորցրած օգուտի հատուցման պատասխանատվության առաջացման հետևանքով, այդ թվում ապրանքի արժեքի կորստի հետևանքով,

4.2.4. դրանց համար հատուկ նախատեսված վայրերում մրցությունների, փորձությունների կամ ուսումնական երթերի ժամանակ ՏՄ-ի օգտագործման ընթացքում պատճառված վնասի հետևանքով,

4.2.5. շրջակա բնությանը հասցված վնասի հետևանքով,

4.2.6. փոխադրվող գույքի հասցրած վնասի հետևանքով, եթե այդ պատասխանատվության ռիսկը ենթակա է պարտադիր ապահովագրման՝ համաձայն պարտադիր ապահովագրության համապատասխան տեսակին,

4.2.7. աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում նրանց կյանքին կամ առողջությանը հասցված վնասի հետևանքով, եթե այդ վնասը ենթակա է հատուցման օրենքով նախատեսված պարտադիր ապահովագրության համապատասխան տեսակի և պարտադիր սոցիալական ապահովագրության համաձայն,

4.2.8. գործատուին հասցված վնասի հատուցման պարտավորությունները, որոնք առաջացել են աշխատողին վնաս հասցնելու հետևանքով,

4.2.9. ապահովագրված SU վարող վարորդի կողմից նույն ապահովագրված SU-ին և դրա կցորդին, դրանցով տեղափոխվող բեռին, դրանց վրա տեղադրված սարքավորմանը հասցված վնասների հետևանքով,

4.2.10. SU-ի բեռնավորման կամ դրա բեռնաթափման ընթացքում պատճառված վնասի հետևանքով,

4.2.11. անտիկվար կամ այլ յուրահատուկ առարկաների, պատմա-մշակութային նշանակություն ունեցող շինությունների և կառույցների, թանկարժեք մետաղներից և թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից պատրաստված գործերի, կանխիկ փողի, արժեթղթերի, կրոնական բնույթի առարկաների, ինչպես նաև գիտական, գրական և արվեստի ստեղծագործությունների, այլ ինտելեկտուալ սեփականության օբյեկտների վնասվածքի կամ ոչնչացման հետևանքով,

4.2.12. տուժածի դիտավորյալ արարքների հետևանքով,

4.2.13. ապահովագրության պայմանագրում(պոլիսում) չնշված անձի կողմից SU վարելու հետևանքով,

4.2.14. անօրինական ձևով SU-ին տիրացած անձի վարելու հետևանքով,

4.2.15. շարժման մեջ չգտնվող SU այրման, ինչպես նաև SU վառելու հետևանքով,

4.2.16. SU պայթելու հետևանքով, եթե դա տեղի չի ունեցել ՃՏՊ վայրում և չի հանդիսանում դրա հետևանք, ինչպես նաև SU պայթեցնելու հետևանքով,

4.2.17. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության հետևանքով,

4.2.18. մարտական գործողությունների, մանևրերի կամ այլ մարտական միջոցառումների, քաղաքացիական պատերազմների, ցանկացած բնույթի ժողովրդական հուզումների կամ գործադուլների հետևանքով, պետական մարմինների կարգադրությամբ SU-ի բռնագրավման, շրջանառությունից դուրս հանման, ձերբակալման կամ ոչնչացման հետևանքով,

4.2.19. եթե ՃՏՊ տեղի է ունեցել ապահովագրության տարածքից դուրս կամ ոչ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում,

4.2.20. օրենքով ապահովագրության պայմանագրում որպես Ապահովադիր կամ վարման թույլտվություն ունեցող անձ նշված ցանկացած անձանց ընտանիքի անդամին և/կամ մտերիմ հարազատին, որդեգրվածին կամ որդեգրածին, խնամակալին կամ հոգաբարձուին հասցված վնասի հատուցման պարտավորության առաջացման, ինչպես նաև անձին, որը համարվում է կամ կարող է համարվել Ապահովադրի կամ վարելու թույլտվություն ունեցող անձի խնամարկության տակ, պատճառված վնասի հետևանքով,

4.2.21. ապահովագրված SU վարորդին վնաս պատճառելու հետևանքով,

4.2.22. ՀՀ օրենսդրության համաձայն SU սեփականատիրոջ պատճառած վնասի պատասխանատվությունը բացառող հանգամանքների հետևանքով:

4.3. Մույն ապահովագրության պայմանների համաձայն «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով ապահովագրական պատահար չի համարվում ՃՏՊ-ն, որի հետևանքն է երրորդ անձանց գույքին հասցված վնասը՝

4.3.1. Ապահովադրի կամ վարելու թույլտվություն ունեցող անձանց դիտավորյալ գործողությունների արդյունքում, ինչպես նաև Ապահովադրի կամ վարելու թույլտվություն ունեցող անձի բացակայության պայմաններում տուժածի կոպիտ անզուշտության արդյունքում,

4.3.2. առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության փորձությունների, սպորտային կամ ուսումնական նպատակներով SU-ի օգտագործման արդյունքում,

4.3.3. իրավաբանական անձի հետ կնքված ապահովագրության պայմանագրում նշված անձի կողմից ոչ աշխատանքային ժամերին և նպատակների համար SU օգտագործման արդյունքում,

4.3.4. առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության SU-ը գործառնական, ֆինանսական վարձակալության հանձնելու արդյունքում,

4.3.5. SU այն անձի կողմից վարելու դեպքում, որը

- չունի համապատասխան կարգի SU վարելու վարորդական իրավունք,
- գտնվում է ալկոհոլի, թմրադեղերի, SU վարելու ընթացքում հակացուցված տոքսիկոլոգիկ պրեպարատների կամ դեղամիջոցների ազդեցության տակ,

4.3.6. եթե SU վարորդը փախուստի է դիմել ՃՏՊ-ի վայրից կամ հրաժարվել է անցնել բժշկական փորձաքննություն, ինչպես նաև եթե SU-ն է թաքնվել ՃՏՊ վայրից, բայց հետագայում հաստատվել է նրա առկայությունը ՃՏՊ վայրում,

4.3.7. Ապահովադրի կամ վարելու թույլտվություն ունեցող անձի կողմից SU շահագործման կանոնների խախտման արդյունքում, այդ թվում՝ SU օգտագործումը անսարք վիճակում և այն պայմաններում, որոնց դեպքում ՀՀ ճանապարհային երթևեկության Կանոններով արգելվում է դրանց շահագործումը, և որը չի անցել տեխնիկական զննում սահմանված կարգով, ինչպես նաև հրդեհային անվտանգության, պայթյունավտանգ և հրդեհավտանգ նյութերի և առարկաների փոխադրման և պահպանման կանոնների, բեռների փոխադրման ընթացքում պահանջվող կանոնների խախտման արդյունքում (համաձայն ճանապարհային երթևեկության Կանոնների)

4.4. Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում SU սեփականատերերի ընդհանուր քաղաքացիական պատասխանատվության մասով:

5. Ապահովագրական գումար

5.1. Ապահովագրական գումարը ապահովագրության պայմանագրով (պոլիսով) սահմանված դրամային գումարն է, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է յուրաքանչյուր ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում (անկախ ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում դրանց քանակից) հատուցել Տուժածներին պատճառված վնասը և/կամ հատուցել Ապահովադրին ապահովագրության պայմանագրով (պոլիսով) նախատեսված ծախսերը:

5.2. Ապահովագրության պայմանագրով (պոլիսով) կարող է սահմանվել մեկ (յուրաքանչյուր) ապահովագրական պատահարի համար Ապահովագրողի պատասխանատվության սահմանաչափը, ինչպես նաև պատասխանատվության այլ սահմանաչափեր:

5.3. Ապահովագրության պայմանագրով (պոլիսով) յուրաքանչյուր ապահովագրված ռիսկի գծով կարող է նախատեսվել ֆրանշիզա, և այդ դեպքում այն նշվում է ապահովագրության պայմանագրում(պոլիսում):

5.4. Ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում(պոլիսում) ապահովագրական գումարը կարող է նշվել նաև արտարժույթով, որի համարժեքն է հանդիսանում ՀՀ դրամով որոշված համապատասխան գումարը (հետագայում ապահովագրություն համարժեք արտարժույթով): Այդ պարագայում արտարժույթի ռիսկը վերահսկելու նպատակով Ապահովագրողը իրավունք ունի կիրառել իր կողմից համարժեք արտարժույթով ապահովագրության իրականացման համար ընդունելի սահմանափակումներ արտարժույթի փոխարժեքի փոփոխման վրա: Նման սահմանափակումների կիրառումը հնարավոր է ապահովագրության պայմանագրում(պոլիսում) դրա պատշաճ ամրագրման, ավելացված ապահովագրական սակագնի կիրառման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ գործիքների կիրառման դեպքում:

6. Ապահովագրության պայմանագրի կնքման կարգը

6.1. Ապահովադիրը, Ապահովագրողի պահանջով, պարտավոր է լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևաչափի դիմումը: Ապահովագրության դիմումը լրացվում է կամ Ապահովադրի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից: Ապահովադրի խնդրանքով կամ իր թելադրանքով դիմումը կարող է լրացնել նաև Ապահովագրողի ներկայացուցիչը: Դիմումի բոլոր կետերը պետք է լրացվեն ընթեռնելի ձեռագրով, որը չի ենթադրում երկակի բացատրություն: Ապահովագրության դիմումի մեջ նշված տեղեկությունների ճշմարտացիության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից:

6.2. Ապահովագրության պայմանագիրը կնքելիս Ապահովադիրը պարտավոր է՝

6.2.1. Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն այն հանգամանքների մասին, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և դրա տեղի ունենալու արդյունքում առաջացած հնարավոր վնասների չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար, եթե այդ հանգամանքները հայտնի չեն, բայց պետք է հայտնի լինեն Ապահովագրողին: Ամեն դեպքում էական են համարվում Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրում (պոլիսում) և/կամ Ապահովադրի գրավոր դիմումում նշված հանգամանքները:

6.2.2. Ապահովագրողին ներկայացնել SU վերաբերյալ փաստաթղթերը (SU գրանցման վկայականը կամ տեղեկանք-հաշիվ, SU տեխնիկական անձնագիր),

6.2.3. Եթե Ապահովադիրը չի հանդիսանում SU սեփականատեր նա պարտավոր է, բացի դրանից, SU տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթեր:

6.2.4. Ապահովագրողի պահանջով SU-ն ներկայացնել գնման:

6.3. Եթե ապահովագրության պայմանագրի կնքումից հետո հայտնի դառնա, որ Ապահովադիրը Ապահովագրողին հայտնել է նախապես կեղծ տեղեկություններ ապահովագրության Պայմանների 6.2.1. կետում նշված հանգամանքների մասին, Ապահովագրողը իրավունք ունի մերժել Ապահովադիրին ապահովագրական հատուցում վճարելը, ինչպես նաև ապահովագրության պայմանագիրը ճանաչել առոչինչ:

6.4. Ապահովագրողը ապահովագրության պայմանագրում (պոլիսում) Ապահովադիրի կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա նշում է այն անձանց, որոնք թույլատրված են տվյալ ապահովագրության պայմանագրով ապահովագրված SU վարելու, նրանց ծննդյան ամսաթիվը, վարորդական ստաժը՝ նշելով ստաժի սկզբնական ամսաթիվը (առաջին վարորդական վկայականի ստացման ամսաթիվը):

6.5. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրի (պոլիսի) կորստի դեպքում Ապահովագրողը Ապահովադիրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովադիրին տալիս է կրկնօրինակը: Կրկնօրինակը տալուց հետո կորած ապահովագրության պայմանագիրը (պոլիսը) համարվում է անվավեր և դրա հետ կապված ոչ մի վճարում չի կատարվում:

7. Ապահովագրավճարի վճարման կարգը

7.1. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ դրամով կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին անկանխիկ փոխանցման ճանապարհով:

7.2. «Համարժեք» արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը նշվում է արտարժույթով՝ դրա հաշվարկման նպատակով: Ապահովագրավճարի վճարը իրականացվում է ՀՀ դրամով վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանած փոխարժեքով:

7.3. Մեկ տարուց ոչ պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովադիրին կարող է տրվել հնարավորություն հետաձգել ապահովագրավճարի վճարումը: Ապահովագրավճարի չափաբաժինները և վճարման ժամկետները սահմանվում են ապահովագրության պայմանագրով (ապահովագրության պոլիսով):

7.4. Առաջին չափաբաժնի վճարը Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրության պայմանագրի (ապահովագրության պոլիսի) ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ:

7.5. Եթե ապահովագրության պայմանագրում (ապահովագրության պոլիսում) նշված է հետաձգում «կիսամյակը մեկ» կամ «երկու վճարումով՝ յուրաքանչյուր անգամ ապահովագրավճարի 50%-ի չափով», ապա Ապահովադիրը պարտավոր է վճարել ապահովագրավճարը հավասար չափաբաժիններով: Երկրորդ մասը պետք է վճարվի ապահովագրության պայմանագրի (ապահովագրության պոլիսի) ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան 6 ամսից:

7.6. Եթե ապահովագրության պայմանագրում (ապահովագրության պոլիսում) նշված է հետաձգված վճար «եռամսյակը մեկ անգամ» կամ «չորս չափաբաժնով՝ յուրաքանչյուրը ապահովագրավճարի 25%-ի չափով», ապա Ապահովադիրը պարտավոր է ապահովագրավճարը վճարել չորս հավասար մասերով: Ապահովադիրը պարտավոր է վճարել երկրորդ, երրորդ և չորրորդ մասերը ապահովագրության պայմանագրի (ապահովագրության պոլիսի) ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան համապատասխանաբար 3, 6 և 9 ամիս հետո:

7.7. Մեկ տարուց պակաս ժամկետով ապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում ապահովագրավճարը վճարվում է ամբողջությամբ՝ մինչ ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը:

7.8. Ապահովագրավճարը ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում չվճարելու դեպքում (միանվագ վճարման դեպքում) կամ դրա առաջին չափաբաժինը չվճարելու դեպքում (հետաձգված վճարման դեպքում), ապահովագրության պայմանագիրը չի համարվում ուժի մեջ մտած:

7.9. Ապահովադիրին տրամադրվում է տասնհինգօրյա արտոնյալ ժամանակահատված՝ հերթական վճարումը կատարելու համար՝ սկսած ապահովագրության պայմանագրում կամ ապահովագրության Պայմաններում որպես հերթական վճարման ամսաթիվ նշված ժամկետից: Մինչ արտոնյալ ժամանակահատվածի ավարտը ապահովագրավճարի վճարման պարագայում Ապահովագրողը պատասխանատու է ամբողջ չափով: Արտոնյալ ժամանակահատվածում հետաձգված գումարի չվճարման դեպքում ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարած՝ սկսած ապահովագրության պայմանագրում կամ ապահովագրության Պայմաններում որպես հերթական վճարման ամսաթիվ նշված ժամկետից: Վճարված ապահովագրավճարները

Ապահովադրին չեն վերադարձվում:

7.10. Կողմերի համաձայնությամբ դադարած պայմանագիրը կարող է վերականգնվել ապահովագրված SU գնումից և SU գնման Ակտի կազմումից հետո, որը ստորագրվում է կողմերի կողմից այն պայմանով, որ Ապահովադիրը կվճարի բոլոր հետաձգված վճարները: Տասնհինգօրյա արտոնյալ ժամանակահատվածում հետաձգված վճարների վճարման դեպքում Ապահովագրված SU գնում և SU գնման Ակտի կազմում չի պահանջվում:

Ընդ որում այդ դեպքում ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը չի երկարաձգվում և Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում այն դեպքերի համար, որոնք տեղի են ունենում պայմանագրի դադարումից մինչ դրա վերականգնումը ընկած ժամանակահատվածում:

8. Ապահովագրության ժամկետների և ապահովագրության գործողության ժամկետի սահմանումները

8.1. Ապահովագրության պայմանագիրը (պոլիսը), եթե դրանում այլ բան նախատեսված չէ, կնքվում է մեկ տարի ժամկետով:

8.2. Ապահովագրության պայմանագիրը (պոլիսը) ուժի մեջ է մտնում`

8.2.1. Ապահովագրավճարի կամ դրա առաջին չափաբաժնի կանխիկ վճարման դեպքում` վճարման պահից, բայց ոչ շուտ, քան ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 00 ժամ 00 րոպեն:

8.2.2. Ապահովագրավճարի կամ դրա առաջին չափաբաժնի անկանխիկ վճարման դեպքում Ապահովադրի հաշվարկային հաշվից Ապահովագրողի լիազորած բանկում նրա հաշվարկային հաշվին գուրի փոխանցման օրվան հաջորդող օրվա 00 ժամ 00 րոպեն, բայց ոչ շուտ, քան ապահովագրության պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված ամսաթվի 00 ժամ 00 րոպեն:

8.3. Ապահովագրության պայմանագրի գործողությունը ավարտվում է տեղական ժամանակով ապահովագրության պայմանագրում որպես ավարտի օր նշված օրվա ժամը 24-ը:

8.4. Ապահովագրողի առաջարկով ապահովագրության պայմանագրի` ևս մեկ ժամանակահատվածով երկարաձգման դեպքում Ապահովադրին տրվում է տասնհինգօրյա արտոնյալ ժամանակահատված հաջորդ մեկ տարվա պայմանագրի կնքման և նոր պայմանագրի ապահովագրավճարի կամ դրա առաջին չափաբաժնի վճարման համար: Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից առաջարկված պայմաններով: Եթե նոր ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարի վճարվում է մինչ արտոնյալ ժամանակահատվածի կամ նախորդ ապահովագրության պայմանագրի գործողության ավարտը, ապա նոր ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում նախորդի ավարտի ամսաթվից հետո: Մինչ արտոնյալ ժամանակահատվածի ավարտը նոր ապահովագրության պայմանագրի ապահովագրավճարի կամ դրա առաջին չափաբաժնի չվճարման դեպքում ապահովագրության պայմանագիրը չի համարվում կնքված:

9. Ապահովագրության պայմանագրի դադարումը

9.1. Ապահովագրության պայմանագիրը դադարում է`

9.1.1. դրա գործողության ժամկետի ավարտման դեպքում,

9.1.2. Ապահովագրողի կողմից իր պարտականությունները ամբողջ ծավալով կատարման դեպքում,

9.1.3. դատարանի կողմից ապահովագրության պայմանագիրը անվավեր ճանաչելու դեպքում,

9.1.4. իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման դեպքում, կամ ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան դեպքում,

9.1.5. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում,

9.2. Ապահովագրության պայմանագիրը կարող է դադարել ժամանակից շուտ Ապահովագրողի պահանջով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

9.3. Ապահովագրության պայմանագիրը կարող է դադարել ցանկացած ժամանակ Ապահովադրի պահանջով: Ապահովագրության պայմանագրի ժամկետից շուտ դադարումը իրականացվում է Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա` դրան կցելով ապահովագրության պայմանագիրը(պոլիսը): Պայմանագիրը համարվում է դադարած դիմումի մեջ նշված ամսաթվի 00 ժամ 00 րոպեից, բայց ոչ շուտ, քան Ապահովագրողի կողմից դիմումը ստանալու օրվա 00 ժամ 00 րոպեն: Ապահովագրության պայմանագիրը համարվում է դադարած Ապահովագրողի կողմից

դիմումի ստացման օրվա 00 ժամ 00 րոպեն, եթե ապահովագրության պայմանագրի դադարման ամսաթիվ դիմումի մեջ նշված չէ:

9.4. Ոչ պակաս, քան մեկ տարով կնքված և միանվագ վճարված ապահովագրավաճարի պայմաններում Ապահովադրի ցանկությամբ ժամանակից շուտ ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադրին պայմանագրի գործողության ժամկետի չլրացած ամիսների համար համամասնորեն հաշվարկված ապահովագրավճարը՝ նվազեցված Ապահովագրողի ծախսերով(ապահովագրական գումարի 35%), ինչպես նաև վճարված և վճարման ենթակա հատուցումների չափով, եթե ապահովագրության պայմանագրում (պոլիսում) նախատեսված չեն այլ պայմաններ:

9.5. 9.4. կետում նշված հանգամանքներից տարբեր այլ հանգամանքներում ապահովագրության պայմանագրի լուծման դեպքում ապահովագրավճարը չի վերադարձվում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.6. Եթե Ապահովադիրը ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում վաճառում, նվիրում, փոխանցում կամ այլ ձևով օտարում է ապահովագրության պայմանագրում(պոլիսում) նշված ապահովագրված SU-ի տնօրինման իրավունքը, ապահովագրության պայմանագիրը ժամկետից շուտ դադարում է SU տնօրինման իրավունքի փոփոխման պահից:

9.7. Ապահովագրողի համաձայնությամբ պայմանագրի լուծման դեպքում վերադարձվող ապահովագրավճարը կարող է ուղղվել Ապահովագրողի հետ այլ պայմանագրի վճարմանը:

10. Պարտադիր ապահովագրություն

10.1. Եթե գործող օրենսդրության համապատասխան SU սեփականատերը պարտավոր է ապահովագրվել պարտադիր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրությամբ, ապա ըստ սույն ապահովագրության Պայմանների կնքված ապահովագրության պայմանագրի գործողությունը տարածվում է միայն պարտադիր ապահովագրության պայմանագրով ստացվելիք հատուցման անբավարար լինելու դեպքում, երբ վնասը հասցվել է տուժածների կյանքին, առողջությանը կամ գույքին, ինչպես նաև այն պատասխանատվության առաջացման դեպքում, որը չի վերաբերում պարտադիր ապահովագրության պայմանագրով ապահովագրված ռիսկին, եթե այդ պատասխանատվությունը նախատեսված է սույն պայմաններով և/կամ ապահովագրության պայմանագրով(պոլիսով):

10.2. Քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրով(պոլիսով) սահմանված ապահովագրական գումարը հանդիսանում է Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր սահմանաչափը պարտադիր և կամավոր ապահովագրության պայմանագրերով սահմանված մեկ ապահովագրական պատահարի համար, այդ թվում, նաև երբ ապահովագրության պայմանագրերը կնքված են տարբեր ապահովագրողների հետ:

10.3. Քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցումը վճարվում է ուղիղ նյութական վնասի չափով՝ նվազեցնելով քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրով Տուժածին վճարված կամ վճարման ենթակա հատուցման գումարները, որը Ապահովադիրը օրենքով կնքել է կամ պետք է կնքեր, ինչպես նաև ապահովագրության պայմանագրում(պոլիսում) նշված ֆրանշիզայի գումարները, բայց ոչ ավել, քան կամավոր ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարը կամ պատասխանատվության սահմանաչափը:

10.4. Եթե քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության կանոններով հաշվարկված ապահովագրական հատուցման գումարը ավելի մեծ է, քան քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրով(պոլիսով) նախատեսված ապահովագրական գումարը (պատասխանատվության սահմանաչափը), ապա հատուցումը կատարվում է ըստ քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի: Քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրով (պոլիսով) հատուցում չի տրվում:

11. Կողմերի փոփոխարեքությունները ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում

11.1. Քաղաքացիական պատասխանատվության գծով ապահովագրական պատահարի նշաններ ունեցող դեպքի տեղի ունենալու դեպքում, Ապահովադիրը, իր ներկայացուցիչը, վարման իրավունք ունեցող անձը, վարորդը պարտավոր են

11.1.1 Անհապաղ ձեռնարկել բոլոր հնարավոր խելամիտ և հնարավոր միջոցառումները, որոնք ուղղված են տուժած անձանց կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասների նվազեցմանը կամ կանխարգելմանը: Այդ միջոցառումները ձեռնարկելով՝ Ապահովադիրը պարտավոր է հետևել Ապահովագրողի ցուցումներին, եթե նրան այդպիսիք տրվել են:

11.1.2. Ձեռնարկել միջոցառումներ և կատարել ՀՀ ճանապարհային երթևեկության Կանոններով նախատեսված պարտավորությունները:

11.1.3. Եթե կա հնարավորություն տվյալ մարզի համար ապահովագրության պայմանագրում(պոլիսում) նշված հեռախոսով հաղորդել Ապահովագրողին կամ նրա Ներկայացուցչին և նրա հետ համաձայնեցնել հետագա քայլերը:

11.1.4. Հայտնել այն անձանց, ում վնաս է պատճառվել, որ իր պատասխանատվությունը ապահովագրված է «ՅՈՒՄԻՌԵՍՈ» ՍՓԲԸ-ում, հայտնել քաղաքացիական պատասխանատվության պարտադիր և կամավոր ապահովագրության պայմանագրերի(պոլիսների) սերիան և համարը, Ապահովագրողի կամ տվյալ մարզում գտնվող Ապահովագրողի Ներկայացուցչի հասցեն և հեռախոսահամարը:

11.1.5. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկման փաստը հաստատող ցանկացած միջոցով հանձնել կամ ուղարկել Ապահովագրողին կամ Ապահովագրողի Ներկայացուցչին ՃՏՊ մասին լրացված հաղորդագրությունը, ինչպես նաև Ապահովագրողի կողմից հաստատված ձևով գրավոր դիմում: Դիմում տալուց Ապահովադիրը պետք է ներկայացնի՝

- 1) Քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագիրը(պոլիսը)
- 2) Ապահովագրողի մոտ շահերի ներկայացման իրավունքը հաստատող լիազորագիր(իրավաբանական անձանց համար),
- 3) Ապահովագրված ՏՄ գրանցման վկայականը,
- 4) ՏՄ վարելու իրավունքի լիազորագիրը կամ ՃՏՊ պահին ՏՄ վարող անձի ճանապարհային անցաթուղթը:
- 5) ՃՏՊ պահին ՏՄ վարող անձի վարորդական վկայականը,
- 6) Քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագիրը(պոլիսը), ինչպես նաև քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմաններին համապատասխան ՃՏՊ ընթացքում կազմվող փաստաթղթերը:

11.1.6. Այն դեպքում, երբ ՃՏՊ տեղի է ունեցել հեռու, անմարդաբնակ կամ դժվար հասանելի վայրերում, 11.1.5 կետում նշված պարտավորությունները Ապահովադիրը պետք է կատարի ՃՏՊ տեղի ունենալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

11.1.7. Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել վնաս պատճառելու փաստի գծով կոմպիտենտ մարմինների՝ գործողություններ սկսելու մասին(հետաքննություն, քրեական գործի հարուցում, ծանուցում դատարան ներկայացնելու համար ,

11.1.8. Չվճարել հատուցումը, առանց Ապահովագրողի համաձայնության մասամբ կամ ամբողջությամբ չընդունել պատճառված վնասի հետ կապված պահանջները:

11.2. Ապահովագրական հատուցում ստանալու Ապահովադիրի դիմումի առկայության դեպքում այլ փաստաթղթերը, որոնք հաստատում են պահանջի հիմնավորվածությունը և վնասի փոխհատուցման չափը կարող են ներկայացվել հենց Տուժածի կողմից:

11.3. Ապահովադիրը(այլ անձ, որի պատասխանատվությունը ապահովագրված է) Ապահովագրողի պահանջով պարտավոր է Ապահովագրողին կամ նրա կողմից նշված անձին լիազորել, որպեսզի նա ներկայացնի Ապահովադիրին(պատասխանող)դատական գործընթացում, բոլոր անհրաժեշտ գործընթացային լիազորություններով, այդ թվում հայցի ընդունման իրավունքով:

11.4. Ապահովագրողի կողմից Ապահովադիրի/Տուժածի կողմից ապահովագրական հատուցում ստանալու դիմումի ստանալու ընթացքում Ապահովագրողը պարտավոր է անցկացնել վնասված գույքի զննություն և/կամ կազմակերպել անկախ փորձաքննություն(գնահատում), այդ թվում Տուժածից հատուցում ստանալու դիմում ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննության ուղեգիր տալու միջոցով, եթե Ապահովադիրի և Տուժողի միջև այլ ժամկետ սահմանված չէ:

Ապահովագրողը պարտավոր է Տուժողի հետ համաձայնեցնել վնասված գույքի զննման և/կամ անկախ փորձաքննության կազմակերպման ժամանակը և տեղը՝ հաշվի առնելով Ապահովագրողի,

փորձագետի աշխատանքային գրաֆիկը և սույն կետում նշված վնասված գույքի զննման ժամկետը, իսկ Տուժողը Ապահովագրողի հետ համաձայնեցված ժամանակահատվածում պարտավոր է ներկայացնել վնասված գույքը:

Եթե վնասվածքի բնույթը կամ վնասված գույքի հատկությունները բացառում են զննման ներկայացնելու և փորձաքննություն կազմակերպելու հնարավորությունը Ապահովագրողի և/կամ փորձագետի գտնվելու վայրում (օրինակ ՏՄ վնասվածք, որը բացառում է դրա մասնակցությունը ՃՏՊ-ին), ապա նշված զննումն ու անկախ փորձաքննությունը անցկացվում է վնասված գույքի գտնվելու վայրում սույն կետում նշված ժամկետում:

Ապահովագրության պայմանագրով(պոլիսով) կարող են նախատեսվել այլ ժամկետներ, որոնց ընթացքում Ապահովագրողը պարտավոր է ժամանել վնասված գույքի զննման և անկախ փորձաքննության կազմակերպման համար՝ հաշվի առնելով դժվար հասանելի, առանձնացված կամ սակավաբնակ վայրերում դրանց անցկացման տարածքային առանձնահատկությունները:

Դժվար հասանելի, առանձնացված կամ սակավաբնակ վայրերում գտնվող վնասված գույքի զննումը և/կամ անկախ փորձաքննության կազմակերպումը անցկացվում է Ապահովագրողի կողմից Ապահովադրի/Տուժողի կողմից ապահովագրական հատուցում ստանալու դիմում ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ապահովադրի և Տուժողի միջև այլ ժամկետ սահմանված չէ:

11.5. ՏՄ վնասվելու դեպքում պատճառված վնասի չափը, ՏՄ-ին հասցված վնասները, ՏՄ վնասվածքների և դրանց պատճառների հաստատման, վերանորոգման արժեքը և մեթոդները պարզելու նպատակով անց է կացվում ՏՄ անկախ փորձաքննություն՝ ՀՀ Կառավարության սահմանած կարգին համապատասխան:

11.6. Ապահովադրի/Տուժածի կողմից ապահովագրական հատուցում ստանալու գրավոր դիմումի ստացման ընթացքում Ապահովագրողը իրավունք ունի պահանջել ոչ միայն Տուժածի ՏՄ-ի զննում և անկախ փորձաքննության անցկացում, այլ վնաս պատճառողի ՏՄ-ի:

Այդ պարագայում, Ապահովագրողը պարտավոր է զննել ապահովագրված ՏՄ-ն և/կամ անցկացնել իր հաշվին անկախ փորձաքննություն՝ սույն Պայմանների 11.4. կետում նախատեսված դրույթներին համաձայն:

12. Վնասի և ապահովագրական հատուցման չափի որոշումը

12.1. Ըստ սույն Պայմանների «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով հատուցման ենթակա է պատճառված ուղղակի իրական վնասը, որը առաջացել է ապահովագրության պայմանագրում նշված ՏՄ-ի վարման ընթացքում ապահովագրական պատահարի արդյունքում Տուժածի կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասվածքի հետևանքով:

Պատճառված նյութական վնասը գնահատվում է դրամային արտահայտությամբ

12.2. Կյանքին և առողջությանը հասցված վնաս է համարվում՝

- առողջության վատթարացման հետևանքով տուժածի կորցրած աշխատավարձը(եկամուտը)

-վնասվածքի ստացման հետևանքով արված լրացուցիչ ծախսերը, այդ թվում բուժման ծախսերը, լրացուցիչ սնվելու ծախսերը, դեղամիջոցների ձեռքբերումը, պրոթեզավորումը, կողմնակի անձի հետևումը, սանատորիական բուժումը, հատուկ ՏՄ-ների ձեռքբերում, պատրաստումը այլ մասնագիտության, եթե հաստատվի, որ դրանք բխում են լրացուցիչ օգնության և խնամքի անհրաժեշտությունից, որոնց կարիքը տուժածը ունի, բայց իրավունք չունի դրանք ստանալ անվճար,

- Տուժածի մահվան արդյունքում արված ծախսերը:

12.3. Ապահովագրողը իրավունք ունի Տուժածի համաձայնությամբ կատարել ապահովագրական հատուցման մասնակի վճարում՝ ապահովագրական պատահարի հետևանքով անհրաժեշտ դարձած տրամադրված բժշկական ծառայությունների փաստաթղթերի հիման վրա, կամ վճարել այդ գումարը ուղիղ բժշկական ծառայություն մատուցող հիմնարկին:

12.4. Տուժածի կյանքին կամ առողջությանը հասցված վնասի համար կատարվող ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է սոցիալական ապահովման և անձնական կամավոր ապահովագրությունից ստացվելիք գումարներից անկախ:

12.5. Գույքին պատճառված վնաս է համարվում Տուժածին պատկանող ՏՄ-ին կամ այլ գույքին հասցված վնասվածքը կամ դրա ոչնչացումը, ինչպես նաև այլ հիմնավորված ծախսեր, որոնք կատարվում են ապահովագրական պատահարը կարգավորելու նպատակով(ՃՏՊ վայրից ՏՄ էվոկուացիա, վնասված ՏՄ պահպանում, տուժածներին բուժհաստատություն հասցնելու ծախսերը)

12.5.1. ՏՄ կամ այլ գույքի վնասվածքի դեպքում հատուցման ենթակա են վերանորոգման ծախսերը՝ հաշվի առնելով գործող միջին գները, նյութերի և պահեստամասերի արժեքը, որոնք անհրաժեշտ են վերանորոգման ընթացքում:

Վերականգնողական ծախսերի չափը որոշելու ընթացքում հաշվի է առնվում պահեստամասերի, հանգույցների, ագրեգատների և դետալների մաշվածությունը, որոնք օգտագործվում են վերանորոգման ընթացքում:

Եթե վնասված SU կամ այլ գույքի վերականգնման արժեքը այդ վերականգնումը դարձնում է տնտեսապես աննպատակ, ինչպես նաև դրանց ոչնչացման դեպքում, հատուցվում է դրանց իրական արժեքը՝ նվազեցրած մնացորդների արժեքը, որոնք ենթակա են հետագայում օգտագործման:

12.5.2. Ապահովագրողը հատուցում է բոլոր անհրաժեշտ և խելամիտ ծախսերը, որոնք կատարել է Տուժածը՝ վնասը նվազեցնելու նպատակով:

12.5.3. Ապահովագրողը վճարում է վնասի գնահատման և անկախ փորձաքննության անցկացման համար կատարված ծախսերը:

12.5.4. Ապահովագրողը վճարում է ծախսերը, որոնք անհրաժեշտ են մինչև Ապահովագրողի ներկայությամբ իրականացվող գնումը և անկախ փորձաքննությունը վնասված գույքի պահպանման համար:

12.5.5. Ապահովագրողը վճարում է դատական ծախսերը, ինչպես նաև այլ ծախսեր, որոնք Ապահովագրողը կատարել է Ապահովագրողի ցուցումով:

12.6. Ապահովագրության պայմանագրով(պոլիսով) կարող է նախատեսվել պահեստամասերի, հանգույցների, ագրեգատների և դետալների համար վճարում՝ առանց հաշվի առնելու դրանց մաշվածությունը, այն պայմանով, որ վերանորոգումը տնտեսապես նպատակահարմար է, բայց ոչ ավել, քան գույքի իրական արժեքն է: .

12.7. Եթե վնասված գույքը SU չի, Ապահովագրողը հատուցում է մինչև վերանորոգման վայր նյութերի և պահեստամասերի առաքման ծախսերը, նորոգման վայր գույքի տեղափոխման և հետ բերման ծախսերը, վերանորոգող բրիգադների՝ նորոգման վայր տեղափոխելու և հետ բերման ծախսերը:

12.8. Վերանորոգման ծախսեր չեն համարվում գույքի նորացման և բարելավման համար կատարված լրացուցիչ ծախսերը, և ծախսերը, որոնք արվում են ժամանակային կամ կողմնակի վերանորոգման ընթացքում:

12.9. Ապահովագրողը իրավունք ունի տուժողի գրավոր համաձայնությամբ ապահովագրական հատուցման հաշվում կազմակերպել և վճարել վնասված գույքի վերանորոգումը:

Տուժածի հանդեպ գույքի վերանորոգման որակի համար պատասխանատու է վերանորոգումն իրականացնող անձը:

12.10. Պատահարը ապահովագրական համարելու և «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով հատուցումներ վճարելու հիմք են հանդիսանում Ապահովագրողի, նրա ներկայացուցչի կամ վարելու թույլտվություն ունեցող անձի կողմից ներկայացված դիմումը, որի ձևը սահմանված է Ապահովագրողի կողմից և փաստաթղթերը, որոնք նշված են սույն Պայմանների 11.1.5 կետով, ինչպես նաև Ապահովագրողի կողմից Տուժողից պահանջվող հետևյալ փաստաթղթերը՝

- հատուցում ստանալու դիմում,
- ՃՈ-ի կողմից տրված տեղեկանքը ՃՏՊ-ի վերաբերյալ և/կամ աղմինիստրատիվ իրավախախտման մասին արձանագրություն կամ որոշում,
- Ապահովագրողի ներկայացուցչի կողմից ստորագրված վնասված գույքի գնման ակտ,
- գնահատում իրականացնելու լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից տրված պաշտոնական փաստաթղթի բնօրինակը(վավերացված պատճենը), որի մեջ նշված է տուժածի գույքին պատճառված վնասի չափը դրամային արտահայտությամբ՝ դրան կցելով լիցենզիայի պատճենը,
- համապատասխան բժշկական հաստատության եզրահանգումը, որի մեջ նշված են տուժածների վնասվածքները և հաշմությունը, ախտանիշը, անաշխատունակության ժամանակահատվածը,
- բուժման համար վճարված հաշիվները,
- եզրահանգումը (հաշմանդամության հաստատման դեպքում),
- տուժածի մահը և դրա պատճառը հաստատող բժշկական հաստատության եզրահանգումը,
- մահվան վկայականի պատճեն,
- ՃՏՊ արդյունքում կյանքի և առողջությանը հասցված վնասի գծով քրեական գործի հարուցման/մերժման որոշման պատճենները,
- դատական մարմինների կայացրած որոշումները, որոնք օրինական ուժի մեջ են մտնում (գործը դատարանում դիտարկելու դեպքում),
- քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պոլիսով ստացված հատուցման փաստը և չափը հաստատող փաստաթղթեր, եթե վնասը հատուցվել է այլ Ապահովագրողի կողմից,

- տուժածի անձը հաստատող փաստաթղթեր, վնասված կամ ոչնչացված գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր, նրա՝ հատուցում ստանալու իրավունքի օրինական լինելը հաստատող փաստաթղթեր,
 - Տուժածի ներկայացուցչի մոտ պետք է սահմանված կարգով առկա լինի Ապահովագրողի մոտ տուժողին ներկայացնելու իրավունքը տվող փաստաթուղթը,
 - այլ անհրաժեշտ փաստաթղթեր համապատասխան իրավասու կազմակերպությունների կողմից, որոնք հաստատում են պատճառված վնասի չափը և ներկայացված պահանջի օրինական լինելը,
- 12.11. «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով հատուցումները վճարվում են պատճառված նյութական վնասի չափով՝ նվազեցնելով քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության պոլիսով Տուժողին վճարված կամ վճարման ենթակա հատուցումների չափով, որը Ապահովադիրը օրենքին համաձայն կնքել է կամ պետք է կնքեր, ինչպես նաև ապահովագրության պայմանագրով նախատեսված ֆրանշիզայի գումարները, բայց ոչ ավել, քան կամավոր ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարն է կամ պատասխանատվության սահմանչափը,
- 12.12. Եթե Ապահովագրողի հետ գրավոր համաձայնությամբ որոշված չափով Ապահովադիրը ինքը հատուցել է պատճառված վնասը, ապա հատուցումը կարող է վճարվել Ապահովադիրին, այն պայմանով, որ նա կներկայացնի սահմանված կարգով Ապահովադիրի նկատմամբ Տուժողի առարկության մեթոմը և փաստաթղթերը, որոնք թվարկված են սույն Պայմանների 12.10 կետում:
- 12.13. Եթե վնասը պատճառվել է մի քանի տուժածի և վնասի ընդհանուր չափը գերազանցում է ապահովագրական գումարը կամ պատասխանատվության սահմանաչափը, ապա յուրաքանչյուր տուժողին հատուցվում է իրեն պատճառված վնասի չափի և բոլոր տուժածներին հատուցվելիք ընդհանուր գումարի հարաբերության համամասնությամբ:
- Առաջին հերթին վճարվում է այն տուժողի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցումը:
- 12.14. Եթե պատճառված վնասի չափը գերազանցում է ապահովագրական գումարը կամ պատասխանատվության սահմանաչափը, ապա փաստացի վնասի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է վճարի այն անձը, որը օրենքով պատասխանատու է պատճառված վնասի հատուցման համար:
- 12.15. «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով ապահովագրական հատուցման վճարում չի կատարվում սույն Պայմանների 4.2. կետում նշված դեպքերում, իսկ գույքին վնաս պատճառելու դեպքում նաև սույն Պայմանների 4.3 կետում նշված դեպքերում և այն դեպքում, երբ Ապահովադիրը կամ լիազորված վարորդը սահմանված ձևով չեն կատարում իրենց պարտականությունները, որոնք նշված են սույն ապահովագրության Պայմանների 13.2 կետում:.
- 12.16. Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է Ապահովագրողի կողմից դեպքը ապահովագրական ճանաչելու օրվանից 10 օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան Ապահովագրողի հաշվարկային հաշվի վրա ապահովագրավճարի փոխանցումը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 12.17. Եթե Ապահովադիրը կնքել է «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով կամավոր ապահովագրության պայմանագիր ապահովագրության պայմանագրում նշված ՏՄ-ի նկատմամբ մի քանի ապահովագրական ընկերության հետ(կրկնակի ապահովագրություն), ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրության պայմանագրում նշվածովյալ ռիսկի գծով ապահովագրական գումարի և բոլոր ապահովագրության պայմանագրերում նշված ապահովագրական գումարների հանրագումարի հարաբերության համամասնությամբ որոշված գումարի չափով:
- 12.18. Համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումը տրվում է ՀՀ դրամով տվյալ արտարժույթի համար հատուցման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքով հաշվարկված: Այդ պարագայում արտարժույթի ռիսկի վերահսկումն իրականացնելու նպատակով Ապահովագրողը իրավունք ունի սահմանել կիրառել արտարժույթի մեծության փոփոխման սահմանափակումներ, որը ընդունվում է Ապահովագրողի կողմից այն դեպքում, երբ ապահովագրական պայմանագիրը կնքվում է համարժեք արտարժույթով, որի համարժեքում արտացոլվում են Ապահովագրողի պարտավորությունները ապահովագրական գումարի նկատմամբ, ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում պետք է հաշվարկի ապահովագրական հատուցման գումարը՝ հաշվի առնելով ապահովագրության պայմանագրում նշված արտարժույթին համարժեք ՀՀ դրամով, որը ավելացվում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրում նման փոփոխության համար նշված

սահմանը, այդ փոփոխության նկատմամբ և ոչ ավել քան Ապահովադրի կրած վնասն է:

13. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

13.1. Ապահովադիրը իրավունք ունի՝

13.1.1. «Քաղաքացիական պատասխանատվություն» ռիսկի գծով ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում տուժածների կյանքին, առողջությանը և գույքին վնաս հասցնելու հետևանքով տուժածների առարկությունների վճարման, ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի կամ պատասխանատվության սահմանչափի սահմաններում,

13.1.2. լուծել ապահովագրության պայմանագիրը ժամկետից շուտ,

13.1.3. Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում նշված վարելու թույլտվություն ունեցող անձանց ցուցակում փոփոխություն մտցնելու: Նման փոփոխությունը կատարելու համար Ապահովադիրը պետք է փոփոխություն կատարելու ենթադրվող օրվան նախորդող ոչ պակաս, քան 3 օր առաջ գրավոր ձևով դիմել Ապահովագրողին, որը դառնում է ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը,

13.1.4. ապահովագրության պայմանագրի կորստի դեպքում՝ դրա կրկնօրինակի ստացմանը: Կրկնօրինակի ստացումից հետո կորած ապահովագրական պայմանագիրը համարվում է անվավեր և դրա հետ կապված վճարումներ չեն իրականացվում:

13.2. Ապահովադիրը (լիազորված վարորդը) պարտավոր է՝

13.2.1. Ապահովագրության պայմանագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի բոլոր այն հանգամանքները, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի և Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագիր կնքելու որոշում կայացնելու համար որոշելու համար,

Էական են համարվում այն հանգամանքները, որոնք նշված են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրի ստանդարտ ձևաչափում և/կամ նրա գրավոր դիմումում,

13.2.2. Անհապաղ, բայց ապահովագրության պայմանագրի կնքումից ոչ ուշ, քան 3 օրում, գրավոր հաղորդել Ապահովագրողին այլ ապահովագրողների հետ կնքած քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի մասին,

13.2.3. ապահովագրության պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,

13.2.4. ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, բայց ոչ ուշ, քան դրանց ի հայտ գալուց 24 ժամ հետո, Ապահովագրողին գրավոր հաղորդել ապահովագրության պայմանագրում նշված SU շահագործման այն պայմաններում փոփոխությունների մասին, որոնք Ապահովագրողին են հաղորդվել ապահովագրության պայմանագրի կնքման պահին և կարող են էական ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի մեծության վրա (նոր անձին ապահովագրված SU-ն վարելու թույլտվություն տալը, SU-ն գործառնական, ֆինանսական վարձակալության հանձնելը, սպորտային և ուսումնական մրցումներում մասնակցել)

13.2.5. Ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրված SU պահմանել սարքին վիճակում,

13.2.6. Վնասի հնարավորությունը նվազեցնող կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկել ,

13.2.7. լիազորված վարորդներին ծանոթացնել սույն Պայմանների հետ,

13.2.8. կատարել սույն Պայմանների կանոնները (լիազորված վարորդի կողմից սույն Պայմանների խախտումը դիտարկելու դեպքում Ապահովադրի կողմից սույն Պայմանների խախտում) ,

13.2.9. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող դեպքի տեղի ունենալու դեպքում

- ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցառումները վնասը նվազեցնելու համար
- ապահովել պատահարի փաստաթղթերի ձևակերպումը ՃՈ մարմիններում,
- անձանց, ում պատճառով է վնասը հաղորդել, որ իր պատասխանատվությունը ապահովագրված է «ՅՈՒՆԻՌԵՍՈՆ» ԱՓԲԸ-ում, հաղորդել Ապահովագրողի հասցեն ու պարտադիր և կանխավոր պոլիսների սերիան և համարը,
- հնգօրյա ժամկետում (չհաշված հանգստյան և տոնական օրերը) պատահարի մասին Ապահովագրողին հայտնել (նամակով, պոլիսում նշված ֆաքսով կամ հեռախոսով), համաձայնեցնել նրա հետ հետագա քայլերը, ինչպես նաև Ապահովագրողի կողմից սահմանված ձևաչափում գրավոր դիմում ներկայացնել, .

Դիմում տալուց Ապահովադիրը պարտավոր է ներկայացնել՝

ա) ապահովագրության պայմանագիրը/պոլիսը,

բ) ապահովագրական ընկերությունում գործերի վարման իրավունքի լիազորագիրը (իրավաբանական անձանց համար),

գ) ՏՄ գրանցման վկայականը,

դ) ՏՄ վարելու լիազորագիրը կամ ՃՏՊ ժամանակ ՏՄ վարող վարորդի ճանապարհային անցաթուղթը,

ե) ՃՏՊ ժամանակ ՏՄ վարող վարորդի վարորդական վկայականը,

13.2.10. Վնասված գույքի զննման անցկացման օրվանից ոչ պակաս, քան 3 օր առաջ Ապահովագրողին հաղորդել զննման անցկացման տեղի և ժամանակի մասին,

13.2.11. Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել վնասի պատճառման փաստի գծով կոմպլիտենտ մարմինների կողմից իրականացված գործողություններ սկսելու մասին (հետաքննություն, քրեական գործի հարուցում և այլն)

13.2.12. Առանց Ապահովագրողի համաձայնության չվճարել հատուցումը, չընդունել մասնաբ կամ ամբողջությամբ վնասի պատճառման հետ կապված պահանջները,

13.2.13. Անհապաղ Ապահովագրողին տեղյակ պահել և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցառումները ներկայացված պահանջների նվազեցման գծով, եթե Ապահովադիրը կամ ապահովագրված անձը հիմք ունեն դրա համար,

13.2.14. Ապահովագրողի պահանջով ներկայացնել վնաս պատճառողի ապահովագրված ՏՄ զննման և անկախ փորձաքննության անցկացման համար,

13.3. Ապահովագրողը իրավունք ունի`

13.3.1. ստուգել իրեն ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերը,

13.3.2. մասնակցել վնասված գույքի զննմանը,

13.3.3. Ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող դեպքի պատճառները և հանգամանքները, ինչպես նաև հարցումներ ուղարկել համապատասխան մարմիններ,

13.3.4. Ապահովադիրից կամ ապահովագրված անձից պահանջել ապահովագրական պատահարի և դրա առաջացման հանգամանքների հաստատման համար անհրաժեշտ տեղեկություններ,

13.3.5. Իր վրա վերցնել դատարանում գործի վարումը,

13.3.6. Օրենքով նախատեսված կարգով բողոքարկել Ապահովադիրի կամ ապահովագրված անձի ներկայացրած պահանջի չափը,

13.3.7. մերժել ապահովագրական հատուցումը վճարելը` դրա մասին գրավոր հայտնելով Ապահովադիրին և տուժողին,

13.3.8. Ապահովագրական ռիսկի մեծացման դեպքում պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխում կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում: Եթե Ապահովադիրը հրաժարվում է պայմանների փոփոխմանը կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարել Ապահովագրողը իրավունք ունի ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան պահանջել ապահովագրության պայմանգրի լուծում,

13.3.9. Ապահովադիրի կամ լիազորված վարորդի կողմից սույն Պայմանների խախտման դեպքում պահանջել պայմանգրի խզում,

13.3.10. Կատարել Ապահովադիրի ՏՄ զննում ինչպես պայմանգրի կնքման պահին, այնպես էլ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող դեպքի տեղի ունենալուց հետո,

13.3.11. Մերժել ապահովագրական հատուցման վճարելը, եթե Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով չի ներկայացրել ՏՄ զննության և անկախ փորձաքննության անցկացման համար, կամ վնասվածքի բնույթը կամ այլ տեղեկությունները չեն հաստատում ՏՄ-ի` ՃՏՊ մասնակցելը,

13.3.12. ՀՀ գործող օրենսդրությամբ կատարել այլ գործողություններ:

13.4. Ապահովագրողը պարտավոր է`

13.4.1. Ապահովադիրին ծանոթացնել սույն Պայմանների հետ և հանձնել նրան մեկ օրինակ,

13.4.2. Տուժողին հայտնել ապահովագրական հատուցում տալու համար և դեպքը ապահովագրական համարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը,

13.4.3. Որոշում ընդունել դեպքը ապահովագրական համարել չհամարելու վերաբերյալ տուժածից անհրաժեշտ փաստաթղթերի ստանալուց 10 օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարձվել ներկայացված փաստաթղթերի ստուգման անհրաժեշտության դեպքում:

Եթե ՃՏՊ պարզելու համար անց է կացվում հետաքննություն, հարուցված է քրեական գործ կամ սկսված է դատական գործընթաց, ապա ապահովագրական հատուցում տալու որոշումը ընդունվում է

միայն հետաքննության կամ դատական գործի ավարտվելու և Ապահովագրողին համապատասխան փաստաթղթեր հանձնելուց հետո:

13.4.4. Դեպքը ապահովագրական պատահար համարելու դեպքում կատարել ապահովագրական հատուցման վճարում սույն Պայմանների 12.16 կետում նշված ժամկետներում:

13.4.5. Ապահովագրողին և տուժածին գրավոր հաղորդել ապահովագրական պատահարի չընդունման և ապահովագրական հատուցման գումարի նվազեցման մասին:

13.4.6. Չիրապարակել Ապահովադրի, լիազորված վարորդների, անձանց, ում պատասխանատվությունը ապահովագրված է ապահովագրության պայմանագրով, մասին տեղեկություններ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

14. Ռիսկի փոփոխություն

14.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում, բայց ոչ ուշ, քան դրանց ի հայտ գալուց 24 ժամ հետո, Ապահովագրողին գրավոր հաղորդել ապահովագրության պայմանագրում նշված SU շահագործման այն հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք Ապահովագրողին են հաղորդվել ապահովագրության պայմանագրի կնքման պահին և կարող են էական ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի մեծության վրա և այլ դեպքերի մասին, եթե դրանք կարող են էական ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի մեծացման վրա, ինչպես

14.1.1. SU վարձակալության հանձնումը,

14.1.2. ապահովագրության պայմանագրով SU վարելու իրավունք չունեցող անձին լիազորագիր փոխանցելը,

14.1.3. ապահովագրված SU-ի գրանցման փաստաթղթերի, պետհամարանիշերի կորուստը կամ գողությունը,

14.1.4. SU պահպանման կամ օգտագործման բնույթի մեջ էական փոփոխությունները,

14.1.5. ապահովագրության և/կամ ապահովագրվելու մասին դիմումում պայմանագրում նշված ցանկացած պայմանի փոփոխությունը,

14.2. Ապահովագրողը, որը տեղյակ է ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքների մասին, իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխություն կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը համապատասխան լրացուցիչ ապահովագրավճարի վճարում,

14.3. Եթե Ապահովադիրը հրաժարվում է ապահովագրության պայմանագրում փոփոխություններ մտցնել կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարել, Ապահովագրողը իրավունք ունի պահանջել ապահովագրության պայմանագրի խզում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն:

15. Սուբրոգացիա

Ապահովագրողի կողմից սույն Պայմանների 4.3. կետում նշված հանգամանքներում տուժածի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման դեպքում, կամ Ապահովադրի կամ ապահովագրված անձի կողմից սույն Պայմանների 13.2. կետով նախատեսված պարտականությունների չկատարման դեպքում, Ապահովագրողի կողմից հատուցում վճարելուց հետո Ապահովագրողին է փոխանցվում պատճառված վնասի համար պատասխանատու անձից հատուցում պահանջելու իրավունքը:

16. Վեճերի լուծման կարգը

16.1. Բոլոր տարաձայնությունները, որոնք առաջանում են Ապահովագրողի և Ապահովադրի միջև, Ապահովագրողի և տուժածի միջև, լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

16.2. Կողմերի միջև վնասի պատճառների և չափի վերաբերյալ վեճերի դեպքում կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի պահանջել փորձաքննության անցկացում՝ իր հաշվին: